

ՓԱՐԻՋՈՒ ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԵՍՆ



վեց Մայիսի Գաղղիոյ Հասարակայնտութեան Նախագահն Հանդիսաւոր կերպով կը բանար Արուեստահանդիսին դրունքն:

Յետ երեսունն և երեք ամսոց (Յուլիս 1886 — Մայիս 1889) երկարատե և դժուարին տարակուսանաց, Գաղղիա այնոր խաղաղական Հանդիսիւք կը ցուցնէր Համախմբեալ աշխարհի՝ արուեստից և հանճարոյ նոր և հոյակապ արարուածքն:

Նշանաւոր օր մ'էր: Պատուհանք տանց և պարտանց, եկեղեցեաց ճակատք՝ R. F. (République Française) սկզբնատառիւք դրօշադարդեալք՝ ազգային Հանդիսաւորութիւն մը կ'աւետէին: Պարնանային արև մը՝ նախընթաց աւուրց տեղոյն երկնից վրայ կը ճառագայթէր: Հազարաւոր այցելուք յօտար աշխարհաց օր աւուր կը Հասնէին Հետ ղէնտէ՝ ի քաղաքս ամէն երկաթուղեօք:

Այս անթուեկի բազմութիւնն՝ յեկաց և ի բնակաց՝ նոյն աւուր միջօրէին Հետաքրքրարար կը ցրուէր Սենայ դալարազուարճ ափանց վրայ, ուրանօր Թրօքատէրօ (Trocadero) կ'ամբառնայ և զառաջեան՝ Արիսեան դալտին մէջ (Champ-de-Mars)՝ յանկարծածառ չոր քաղաք մը կ'երևի երկու Հարիւր հեկտար Հողագեղանոյ վրայ հիմնարկեալ՝ արդեայց բարգաւաճանաց հրաշակերտօք, և Թաղեալ ի դալարով և ի ծաղկունս անհաւատար գիտնոյ մը վրայ՝ որ մեղմազնաց ելեւջիւք ի Սէնն կը խոնարհի:

Սրաչք դեռ ևս աւարտած չեն. քանդակք, նկարք և գեղարուեստք դեռ իրենց յատուկ տեղիքը բովանդակ դրաւած չեն մեծագործ կամարակապ սենեկաց մէջ. այլ աշխարհահանդիսին արտաքին և փառացի կերպարանքն աւարտած է:

Աստ և անդ ի Թաւս Թփոց, յեղերս ջուրց, օճապտոյտ մանուածապատ ճանապարհաց և դալարազարդ Հողարլրոց վրայ ցանուած են առատօրէն ապարանք, հովանոցք, շատրուանք, փառահէղ կամարք, գիւղական խրք՝ ճիթք, մեծագործ աղբիւրք, ձմերոցք բուսոց, գոյնագոյն վրանք և սինազարդ ճեմելիք:

Այս երկիւսան գեղանկար աշխարհս՝ որոյ բարձրագոյն շինուածոց վրայ կը փայլին յարեռ Հազարաւոր գաղղիական նոր դրօշակք, երկրագլխտիս հարեանցի տեսարան մի կ'ընծայէ: Սեննայն ճարտարապետական ոճք՝ նախնականն և բարգաւաճն՝ ըստ ամենայն չափու և մեծութեան անդր հաւաքեալ են: Բանձաւաց և յանդուք խրճթաց մինչև ի հոյակապ ձեռակերտն վերանորոգման՝ առաջին և այժմու մարդկութեան ընթացքը կը ստորագրեն:

Յերկրէս ջնջեալ ազգք, նոքա ևս որ դեռ ի յոյժ Հեռի վայրս և յանձանօքս պահած են իրենց անյիշատակ ծագումն, շէնն և լարոնացին, Եսքիմացին և Ափրիկոյ վայրենին, Ստորեստունեայն և Փիւնիկեցին, Պարսիկն և Արաբացին, Գերմանն և Հոռվանյեցին, Եգիպտացին և հին Գաղղիացին, ունին իւրաքանչիւրն մասն մի հողոյ, գեղանկար անկիւն մը այս համաշխարհական գալտին վրայ, տնակ մը ծառովք և դալարեօք շրջապատեալ ըստ բնատուր ճաշակին, իշխելով վրանին Բաբելոնի նոր աշտարակն:

Այլ եւս արեւելեան կենաց Հեռախոյզ՝ կը մտնեմ նախ մարդկութեան որորեւ եղած աշխարհի մասին մէջ։

Ատրեստանի տուն մի կից փինիկիեցոյ մը՝ ընդ առաջ կ'ենէ ինձ խառն ընդ Մալայիանց և Քոնկոյի սեամորթից անշուք՝ բայց արտասովոր խորթաց մօտ։ Անոց Հինաուրց մօտացութիւնն կը գուարթացնէ ճափոնացի բուրաստան մը՝ ի ճափոնացւոց մշակեալ և դարմանեալ ըստ իրենց տարապուտ առ վայր մի կը յափշտակուին մօտք մերձ յարեգակնային կայսերութիւնն։

Ետուրացւոց և Պեղասգեանց տներն՝ դարերով յառաջ Խոսպիոյ նախաբնակաց առասպելական ժամանակը կը յիշեցնեն։ մինչդեռ մօտ Ափրիկիեցոց բնակարանք՝ ըստ ցեղից ցեղից՝ Հասարակածի ջերմին աշխարհը կը փոխողրեն գրեզ, այլ զորի կ'ի տապոյն և ի գունդ կրկնից։

Արմաւենեաց տակ Քապիլ տուներու խումբ մը՝ ամենայն ճշգութեամբ օրինակուած տեղացի գեղերէ, որը որչափ հաճոյատեսիլ են ի հեռուստ իրենց գունոց պայծառութեամբն և կարմիր առաստաղիւքն բայց նոյնչափ ալ ազտեղիք և մրրապատք ի մօտոյ։

Յանկարձ ուղտու ստեղծ վրանի մ'առջև կանկ կ'առնուս։ Ընդ վրանաւն ահարկու և գայլադէմ առջօք Հինգ Դուարեկը կը նային քեզի անշափ իմն արհամարհանօք։ Այս գէթախտ սեամորթք կրկու ամօք յառաջ Ճաղգդէր ուսումնական ուղեւորքն սպաննած էին, և Քաղցիկան Պետութիւնն գերի բռնած Այճէրի տանել տուած էր յարգելանս, ուստի՝ Հոս փոխադրուած են իրենց տերանց ի տես լինելու։

Ոչ ինչ հեռու Պէլէու-Էյ-Ճիրայի տուն մ'ընդ առաջ կ'ենէ՝ անեփ աղիւսէ շինուած՝ իւր ակնախտիդ որմազարդիք և յաճնապիտք, որ կարծես Արաբիոյ և Դունիսեան ոպսիսներու փոյն մէջ կը գտնուի։

Քալլ մ'անդին կը մտնես Գունիսեան թաղը, որոյ վրայ կ'իջնէ նշանուոր Սիտի-պէն-Արուզի ութանկիւն մինարէն, և մօտ՝ Մեծ Պալատն՝ Խոյբրուանի շէնքերու քաղուածոյ նմանութեամբ իւր երկնագոյն կէնայ ճակատովն։ Այլ-Արահիպի մզկիթն կամարովն, և ի յիտուստ վերջանալով Սիտի-Որպա մեծ մզկիթին գմբէթովն։ Յոսս նորա կը տարածուի Գունիսեան Սիտի մը, իւր կամարազարդ ճեմիթօք, լոյսն յանձուկ բոլորակաձև լուսաւ մուտներէ իջնելով սրճարանաց և բազմաթիւ կրպակաց վրոյ, ուրանօր բնիկք իրենց ամէն արուեստքը և ճարտարութիւնքը կ'ընծայեն ի տես այցելուաց։

Յառաջ ևս Պէրպէրիստանի ծովահայեաց քաղաք մը կը մտնես։ Յաղթունգամ, տօգոյն գիթօք Մաւրիտանացիք խորհրդածութեանց մէջ ընկըղմած՝ նստած են իրենց խանութներուն մէջ։ Արեւելեան թեթև խնկոյ Հոտ մը կը ծաւալի յօգս։ Կերպասուց և մետաքսեղինաց գէգք գէգք՝ բացագոյն կանաչ, ոսկի գեղնորակ, մասնաւորապէս ծիրանի կարմիր և կապտագոյն արեւելեան անհոգութեամբ ձգուած են սեղանոց վրայ։ Այլեորեալ ծեր Հրէայք ոսկեգիպակ պատմութեան հազամ՝ ծանրութեամբ կը շրջապայն անցողաց աշքերն Հետազօտելով՝ խառն ընդ կապտագոյն պարզօտիք սեամորթից, որոց կարմիր գտակքն և նոյն գունով ճոխ գօտիքն՝ արտասովոր գեղեցկութիւն մի կու տան անոնց։ Ոմանք չրջուն սեղանոց վրայ և պարանոցէն առկափ փոքր ափսէից վրայ կը բերեն բեզ արծաթեղէն զարդարանք, այլք՝ վարդիկաղեր և խնկնիք, այլք՝ հողաթափր և շաքարեղէնք, և այլն։ Ոմանք սպիտակ կարմրախառն կապերտներ կը հիւսնեն, բրուտք իրենց երկրի սափորներ և անօթներ կը գործեն, աղջկունք՝ գեղեցիկ սապատք կը հիւսնեն։ Յանկարձ

կործ կիսաբաց դռնէ մը սրնգի հնչիւնն խառն ընդ ծնծղայից ականջդ կը հասնի, և կ'իմանաս որ մօտ ես արաբացի սրճարանի մը, ուր Մուրաբաանացի հրեայ երգչուհիք ընգաձայնն եղանակօք կը գրաղեցնեն զունկնդիրս :

Այս օտարազգի խմբին մէջէն 'ի գուրս կը ցատկին Սնանացոյ գոյնգոյն վրաններն, յորոց մէկէն կ'ամբառնայ Քամպոկի կանաչագոյն ֆակտոն իւր վարդեգոյն ծնօտիք : Սնոր մօտ՝ Յաւանացի Քամպոկէ՝ որ իւր փախթի գործարաններովն տեղացւոց զգեստուց նիւթը կը հայթհայթէ, Դեզնորակ գէմք, տափուռչ լայն երեսք, փղոսկրեայ սպիտակ առամուշք, սևակարմիր հաստ չրթուշք, ահա վաթսուտի չափ կղզեցոց տնտիւն՝ զորս Ախարհահանդիսին վարչութիւնն բերել տուած է 'ի զարդ տեղւոյս : Այր և կանայք գոյն-ըզգոյն հագած՝ ծայրապատիկ նստած են փախթէ կապերտներու վրայ իրենց խոճքաց սեւոց վրայ և լուծիւծիւծ իրենց հիւսուածքը յառաջ կը վարեն : Իրենց չորս կողմն օտարախորթ լեզուով խօսակցութիւնք ոչ ուշադրութիւնն և ոչ հետաքրքրութիւնն կը չարժեն : Ոմանք Պաթալիայէն են, ոմանք Պանսամ կղզւոյն արեւմտագոյն մասէն եկած են : Մէջերնին ութ քնարահարք կան, որ իրենց պամպուէ քնարովն տեղացւոց պարերը կ'ուղղեն : Ստեփաբար կայսերութեան մէջ պարերգութիւնք հռչակեալք են :


Յաջմէջ՝ Արարական խառն ճարտարապետութիւն մը՝ Ալ-ճերիոյ սահմանագլուխը կը նշանակեն : Կանկ կ'առնուս առ վայր մի զարմանալով Սէն գետը նայող Պալատան ճակատին առջև, որ Գասպահի արքունիաց օրինակութիւն մ'է : Իւր շուրջ հովանոցք և ամարանոցք երևակայական կերպ կրող գրուածքք եքանդակօք՝ զուարթագոյն յախճապակօք պար կ'առնուին մինարէին բոլորը, որ Սիտի-Ալտ-է-Ն-Ռահմանի մեծցուցած օրինակ մ'է : Սիտի ճամբան գքեղ 'ի Գահիրէի փողոցը կը տանի, ուր ամենաբնական երևութիւն տակ՝ արեւելիան կենաց հետաքրքրական էջ մը համահաւարեալ կայ :

Թոնքինեցւոց մասին մէջ տեղացի յիսունհզորս գործաւորք անգլադ կ'աշխատին օր մ'առաջ իրենց անտարտ մասը լրացնելու : Հենաց ոսկեզօծ թանգարանն մասնաւոր այցելութիւն մ'ընել կ'արժէ : Սնցողաբար դիտենք քսան և չորս Թոնքինեցի, ութ Սաքաւալք, ութ Սայկոնցի, նոյնչափ թուով շնդկատտանցի և Աբրիկեցի սպանիք՝ որ զէն 'ի ձուռին պահ ունին իրենց սահմանացը : Այս օտար գինուորութիւնս՝ բացման հանդիսին՝ Նախագահին պատուոյ լեգէոնին գազդիական գօրաց մի թեւը կը կազմէին :

Այս երևակայեալ և 'ի ճարտարագործաց հնարեալ և համահասարեալ աշխարհիս մէջ ներկայ մարդկութիւնն զարմանալով կը տեսնէ իւր ծագումը, իւր բարբը, իւր արուեստը և հնարագիտութիւնը : Իրով բանիւ, իւր յիշատակն և յոյսերը, Որպիսի՝ անբաւութեան խտրոց ընդ մէջ անձաւարեակ և Էֆֆէյի սպտարակին ժամանակ ասորոց մարդկութեան ցեղին մէջ :

Անդ տանող ճամբան արուեստահանդիսին զուարթագոյն մասանց մին է : Անգլիական պարտիզաց, ցայտողջուրց, շատրուանաց, գաճի և աղիւսի, Թրճուս և տպակիրես քարանց, և ջնարեալ կղմնորաց անհամար մեծ և փոքր ձեռակիրտաց, կիտուածոց և աչքը շլացնող արեւուն մէջ փալիլուն միսիոնից միջավայրը կը բարձրանայ թեթևասլաց աշտարակն :

Թերեւս միակ և եզակի առարկայն է՝ որ զաշխարհս կը հրապուրէ 'ի հեռուստ և յորգոր ելած է երկու հարիւր հազար հարաւային Ամերիկացւոց խմբի մը վարձելու : Այժմէն Եւրոպայ եկող բոլոր շոգենաւք մինչև ցօղոստոս ամիսն, Մեծութիւնք և չափք՝ ըստ ամենայնի համեմատականք՝ այլ ահեղք են : Երթն միլիոն հազարագրամ ծանրութեամբ երկաթեայ



վանդակափեղէկ սիւնք՝ 125 մէդր բարձրագոյն քան զամենայն բարձրագոյն շէնս հնոյ և նորոյ աշխարհին: Իւր այցելուաց առաջին ընազդումն՝ ակամայ սարսուռ մ'է: Ամենուն բերնէն զլիսու պտոյտ բառն կը լսուի. և առաջին աստիճանը ոտքըզրած, ամենայն ոք կը վերագառնայ նորէն ակնարկ մը ձգելու օձապտոյտ ստնդղոց մետաղեայ թեկին վրայ, որոյ մէկ ծայրն իւր ձեռքին մէջ է. և միւսն 'ի սարսուռեցնող ծայրն կը հանգչի, ուր 300 մէդր բարձրութեամբ խորխտաբար կը ծածանի զազդիացի եռազոյն դրօշակն: Առաջին դասիկոնն հասնելու համար պէտք է ութեւտան յարկերէ վեր ելնել՝ քաշ տարակն իւր հիմանց հետ կցող անհղաձիգ կամարին պարապութեան մէջ: Ի ստորեւ երկար շղթայ մի ելնողաց մերթ կ'անհետանայ, մերթ վերըս տին կ'երևի երկաթեայ հիւսուածոյ ցանցին մէջ: Այլ աստիճանք գիւրդեանելի են և վստահութիւնն ոտն առ ոտն կը վերադառնայ 'ի քեզ:

Ի վերուստ մէկ հատիկ զարմանանհրաշ տեսարան մը կը սպասէ քեզ: Փարիզ քաղաքը ձորամէջ ընկղմած է. իւր նշանաւոր շէնքերն՝ ընդհանրին մէջէն որդշակի 'ի դուռս կը ցատկին. մէկ նայուածով կ'ընդգրկեն իւր լայն պողոտայքն: Անի օձապտոյտ դրօշադարձ ակունքն կը կորսուին Meudon, Sevres, St. Cloudի գեղանկար կեդրոններու մէջ. Ելիսեան դաշտից վարա զապողոցն, և 'ի մասնաւորի Place de la Concordeի հոյակապ հրապարակն, որ իւր բիրիզեայ և լոխի ջրոյ սիւնակքն ծիրանի գօտոյն բեկբեկեալ գունովը յօգս կը ձգէ: Ինչպիսի տեսարան պիտի ընծայուի արգելք երեկոյեան լուսաւորութեան ժամանակ այս բարձրութիւնէս, երբ բովանդակ հրապարակն հրեղէն վառարան մ'եղած, մէկ թեւը 'ի Թորքատէրօ պիտի տարածէ Ելիսեան դաշտաց արքունի ճամբովն, այս ևս լուսաւորուած անհուն կանթեղօք և այցելուաց հանդիպոյն ճիւղերն եղած: Անդին Թորքատէրոյի թովէժն որոյ համակրական եղբրք և չըմակայքն քիչ օրէն երկու հազար տեսակ վարդենեաց ձորահովիտ մը պիտի ըլլան մրցելով Կիւրիստանի անուշաբոյր վայրաց հետ:

Արդեօք դիտմամբ մոռցանք յիշեցնելու 'ի ներքոյ աշտարակին նշանաւոր մեծ աղբիւրն, որ գլուխ գործոյ մ'է, և լուսավառութեան երկրորդ գեղեցկագոյն կեդրոնն պիտի ըլլայ:

Հինգ արձանաց խումբ մը, ինն մէդր բարձրութեամբ, աշխարհիս հինգ մասերը կը ներկայացնեն, և կիսակործան վայելուչ սափորք հեղեղս ջրոյ կը թափեն ստորերկրիայ քսանեւջորս մէդր տրամագծով աստիճանաւոր աւազանաց մէջ:

Անցնինք աւագանը և դիմենք անդրագոյն կողմը՝ ուր կը սկսին տարածուիլ Աշխարհահանդիսին կենսական մասերն: Մի ծածկած կամարակապք և սրահք պիտի ընդունին քիչ օրէն Արճենդիքեան հասարակապետութեան, Պարագիլի, Մեքսիքոյ, Վենեսուելայ, Գիլիոյ, Պոլիվիոյ, Ռուսկուայ, Կուադալալայ, Նիգերալիուայ, Դոմինիկեան հասարակապետութեան, Փարակուայ, Մոնաքոյի, Շուեդի և Ֆինլանտիոյ բովանդակ հանդիսարանն, ազամանդաց սենեակն և ծխախոտի գործատունն:

Երկու համայնաշխ պալատք պիտի հաւաքեն գեղարուեստքը և ազատական արուեստքը:

Ուրիշ ուղղակի 'ի Ան ձգուած թեւ մը՝ Խալիլոյ, Զուիցիերիոյ, Միացեալ Նահանգաց, Սպանիոյ, Իտալիայի, Լուքսեմպուրկի, Նորվեկիոյ և Ճափոնի սահմանաւոր են. այլ թեւ մի՛ գուգահեռական գետոյն՝ որոշուած է Գաղղիոյ, Անգլիոյ, Գերմանիոյ, Աստր-Հունգարիոյ և Սերպիոյ հանդիսարանաց:

Յափուստ Սենայ չարուած են ցեղային և ծովային. հանդէսքն. նաւաց

տարազը, ձկնորսութեան կազմածը, մակոյկը և նաւակը, փարոսը և նշանացոյց հեռագիրը, այն ամենայն առարկայք որ 'ի նաւահամագիստս հայեցողացն այնչափ հաճոյական ազգեցութիւն մը կ'ընեն:

Կարելի է որդ այս եղական և զարմանաց արժանաւոր տեսարանաց վրայ նոր փայլ մ'ալ աւելցնել՝ որ փոխմանակ չափազանցելու և պակասեցնելու իրենց գեղը, նոր կենդանութիւն մի աւելցնէ: Եւ սակայն նկատենք զայնս յետ սակաւ ժամուց արուեստակեալ լուսոյ ներքեւ. երբ Արիստան դաշտին բարձր լուսալապտեիքն իրենց ելեկտրական լուսոյ հեղեղըն ձգելու ըլլան այս 'ի չհամազգեաց համահաւարեալ աշխարհիս վրայ. երբ Թրոքատէրոյի հե. զասանջ ջրվէժն իւր ալիքը խառնելու ըլլայ թիւրաւոր կանթեղաց բորբոքեալ ճարտարապետական ուրուագծին հետ. երբ Սէնի կանաչազարդ ափունքը՝ հազարաւոր կանթեղիկս իւր ծառոց ոստոց մէջ ծածկելով՝ յանկարծ պտղաւիթ նարնջնեաց ծառաստան մի բլլսնցնէ, ծառ 'ի ծառի միաւորեալ լուսաւոր դրասանգը և յեցեալք ծայրիւք 'ի կամուրջն, որ կարմիր, կապոյտ, վարդազոյն հրոյ վառարան եղած են, որոց տակէն պիտի սահին մեղմաւոր վենետկեան լուսաւորեալ մակոյկք՝ իտալական նուագարանօքն, տեսարանն մի ընայելով գրեթէ նման այնմ՝ զոր տեսանք 'ի մէկ մայիսի 1887 ամին Վենետկոյ գեղանկար ճակին վրայ, այս զանազանութեամբ՝ որ նորա ընդարձակ հորիզոնն՝ չէ այլ ևս գծեալ գեղորէն Ս. Գէորգայ կղզեւան, Ս. Մարկոսի, Սկիափոնի հռչակաւոր ափամբն, հասարակաց Պարտիզան, մենաւոր Ս. Հեղինէիւն և հեռաւոր Ս. Եղիսաբեթի ափամբն. այլ աստանօր ամիս. փեալ Սէնի երկուց եղբար մէջ, որ թերեւ աւելի ներդաշնակ արձագանգ մի տան 'ի լուսախառն մթան իրենց ճամբուն վրայ թիւրաստեղք ցանող լուսական դիցուհեացն երգոյն և քնարին: Եթէ կարելի է, որպէս թէ 'ի մթան զլոյսն նկարագրել ուզելով, երեակայեւ 180,000 Carcer ի ճրագաբերանոց ելեկտրական լուսոյն վրայ՝ յանկարծ Էֆֆէլ աշտարակին Պէնկալայ լուսովք վերուստ 'ի վայր բորբոքին, հերդէն վարդազոյն սին մը գործելով 'ի խորագոյն անասող երկինս, իւր շուքը ձգած յոտս իւր տարածեալ ընդարձակ աւազանաց մէջ, որոց շատրուանաց ներքեւ ելեկտրական լուսոյ հայելիք՝ իրապէս ջրոյ՝ այլ հազուագիւտ բուսոց, տերեւոց, ծաղկանց հսկա. յազործ փունջեր՝ իւրաքանչիւր թերթիկ իւր գունով 'ի վեր կը ցայտեցնեն, որք զանազան բարձրութեամբ իրենց ծանրութենէն հակեալք և քայքայեալք՝ նախ 'ի նրբին և 'ի վճիտ սսկեզոյն, զմրուխտի, յակնթի կայլակ, և ապտաղամանդեայ մանրամուղ փոշի դարձած՝ կ'իսկնան և կը խառնուին իրենց միասնեթաց սսկեալ թառամեալ ծաղկանց հետ յերերուն բուրաստանին, միասնեթամ՝ ևս 'ի ջրոյ՝ այլ այլազան ծաղիկ վերընծաղելու համար, արեւ. լինան վիպաց և կամ հազար և մի գիշերաց ցնորից իրականութիւն մի ներկայացնելով տեսողաց երեւակայութեան. այն ամեն ահա կարելի է գաղափար մ'ունենալ Աշխարհահանդիսի բացման երեկոյեան տեսարանին, զոր ընձայնց գեղեցկագոյնն 'ի քաղաքաց՝ անբոց հրդեհեալ հորիզոնի մը մէջ, և որ մշտնջենաւոր տալուորեալ պիտի մնայ 'ի միտս՝ ճառագայթաւէտ տեսեան մը ազգեցութեան նման:

Շարունակելի

Հ. ԳԵՈՐԳ ՊԱՅՅԱՆ

